

եալ կտորը՝ որու վերնագիրն է «Քիւրդը և Քիւրդիստանը» :

«Ամեն ցեղ մեծ է. անոր միայն մարդիկն են որ փոքրացնել կ'աշխատին. Օսմ. Պետութեան ամեն տեսակ կարեւորութեան արժանի կեանքէն զրկուած է Քիւրդը :

Արեւելեան սահմանագլխի վրայ չորս ու կէս դար նա ծառայեր է Օսմ. Պետութեանը, ու անոր ամեն մէկ անդամը անկեղծօրէն պաշտպաններ է Պետութեան իրաւունքն ու ապահովութիւնը :

Քիւրդ քաջ ցեղը Թիւրքիայի մէջ եղած կարեւոր ազգերու շարքը համարուելու թէ իրաւունքն ունի և թէ արժանաւորութիւնը :

Միևնոյն համարի մէջ «Սայիտ Քիւրդի» ստորագրութեամբ յօդուած մը կ'ըսէ :

«Քիւրդերուն ի՞նչ է անհրաժեշտ. — Տասնհինգ տարի է որ այս պէտքին համար կը մտածեմ. և հետեւեալ երկու մտքէն զատ ոչ մի միջոց չեմ գտեր որ երաշխաւորէ Քիւրդիստանի բաղդը :

1. Ազգային միութիւն :

2. Կրօնական գիտութեան հետ՝ քաղաքակրթական անհրաժեշտ գիտական արուեստները սովորել ու կատարելագործել :

Հիմքը Աշիրաթական գունդերը լինելու են. Աշիրաթներու մէջ դօրք չեղողներն ալ անոնց պէս դարձնելու է ազգային զօրք :»

Այս թերթի երրորդ համարի մէջ կը խօսուի Քիւրդ լեզուի եւ կրթութեան մասին :

Յօդուածագիրը քիւրդ նշանաւոր Պապան ցեղէն Իսմայիլ Հազգին է : Եօդուածը կը կրէ «Քիւրդերէնի վերաբերեալ» խորագիրը : Նախ կը շնորհակալանայ լեզու ու կրթութիւն ունենալու կարեւորութիւնը՝ ազգ մը ներկայացնելու եւ առաջդիմելու համար :

Միջոցներու մասին խօսելով կ'ըսէ. «Օրինակի համար առնենք քիւրդ երախայ մը, այս մարդու գիւղին մէջ մայրենի լեզուէն զատ՝ ոչ մէկ լեզուով չեն խօսիր, եթէ այդ գիւղի